ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Պ-103-30.11.2021-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2018 թվականի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 9-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում «գործի» բառը փոխարինել «գործի (այդ թվում՝ ըստ փուլերի)» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում «75» թիվը փոխարինել «95» թվով:

Հոդված 3. Օրենսգրքի 89-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում լրացնել նոր՝ 18.1-ին և 18.2-րդ կետեր.

«18.1) քննարկում է դատարանների բնականոն գործունեության հարցերը, իր լիազորությունների շրջանակում լուծում դրանք կամ դրանց լուծման նպատակով դիմում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին.

18.2) պարբերաբար ամփոփում է դատական պրակտիկան և վիճակագրությունը և ամփոփման արդյունքների հիման վրա կազմում զեկույցներ.».

2) 1-ին մասի 28-րդ կետում «գործերի քննության» բառերը փոխարինել «գործերի քննության (այդ թվում՝ ըստ փուլերի)» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 92-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Որպես դատարան հանդես գալու դեպքում Բարձրագույն դատական խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին»:

Հոդված 5. Օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, ինչպես նաև դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ՝ նիստին մասնակցող խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե որոշմանը կողմ է քվեարկել խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը:»:

Հոդված 6. Օրենսգրքի 156.1-րդ հոդվածի 7-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Որոշումն ընդունվում է, նիստին մասնակցող Բարձրագույն դատական խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե որոշմանը կողմ է քվեարկել խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը:»:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված փոփոխությունը կիրառվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամներին բաշխվող գործերի նկատմամբ:

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Պ-103-30.11.2021-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 8. 2018 թվականի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ ~~Օրենք~~Օրենսգիրք) 9-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում «գործի» բառը փոխարինել «գործի (այդ թվում՝ ըստ փուլերի)» բառերով:

Հոդված 9. ~~Օրենքի~~Օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում «75» թիվը փոխարինել «95» թվով:

Հոդված 10. ~~Օրենքի~~ Օրենսգրքի 89-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում լրացնել նոր՝ 18.1-ին և 18.2-րդ կետեր.

«18.1) քննարկում է դատարանների բնականոն գործունեության հարցերը, իր լիազորությունների շրջանակում լուծում դրանք կամ դրանց լուծման նպատակով դիմում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին.

18.2) պարբերաբար ամփոփում է դատական պրակտիկան և վիճակագրությունը և ամփոփման արդյունքների հիման վրա կազմում զեկույցներ.~~պարբերաբար ամփոփում է դատական պրակտիկան և վիճակագրությունը և ամփոփման արդյունքների հիման վրա կազմում զեկույցներ.~~».

2) 1-ին մասի 28-րդ կետում «գործերի քննության» բառերը փոխարինել «գործերի քննության (այդ թվում՝ ըստ փուլերի)» բառերով~~.~~:

~~3) 2-րդ մասում «1-ին մասի» բառերից հետո լրացնել «18.1-ին, 18.2-րդ, » բառեր:~~

Հոդված 11. Օրենսգրքի 92-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Որպես դատարան հանդես գալու դեպքում Բարձրագույն դատական խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին»:

Հոդված 12. Օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6. Դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության–ենթարկելու վերաբերյալ, ինչպես նաև դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ՝ նիստին մասնակցող խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե որոշմանը կողմ է քվեարկել խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը:»:

Հոդված 13. Օրենսգրքի —156.1-րդ հոդվածի 7-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Որոշումն ընդունվում է, նիստին մասնակցող Բարձրագույն դատական խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե որոշմանը կողմ է քվեարկել խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը:»:

~~Հոդված 11.~~**Հոդված 14.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված փոփոխությունը կիրառվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամներին բաշխվող գործերի նկատմամբ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկների

N	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1	Հեղինակներ	Նախագիծ	1-6-րդ հոդվածներում «օրենք» բառը փոխարինել «օրենսգիրք» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2	Հեղինակներ	3-րդ հոդված	2-րդ մասով լրացվող «18.2-րդ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «18.2) պարբերաբար ամփոփում է դատական պրակտիկան և վիճակագրությունը և ամփոփման արդյունքների հիման վրա կազմում զեկույցներ.»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3	Հեղինակներ	3-րդ հոդված	3-րդ մասը հանել:	Ընդունվել է:	Ընդունվել է:

4	Հեղինակներ	Նոր հոդվածներ	Նախագծում լրացնել հետևյալ հոդվածները. «**Հոդված 4.** Օրենքի 92-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Որպես դատարան հանդես գալու դեպքում Բարձրագույն դատական խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին»: **Հոդված 5.** Օրենքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «6. Դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, ինչպես նաև դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ՝ նիստին մասնակցող խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ»: **Հոդված 6.** Օրենքի 156.1-րդ հոդվածի 7-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.	Ընդունվել է այլ խմբագրությամբ:	Ընդունվել է:

			«Որոշումն ընդունվում է նիստին մասնակցող Բարձրագույն դատական խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:»:		
5	Կառավարության ներկայացուցիչ	5-րդ հոդված	Հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 5. Օրենքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.«Դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, ինչպես նաև իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ՝ խորհրդի նիստին ներկա անդամների թվի ձայների մեծամասնությամբ, բայց ոչ պակաս քան խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն կեսով:»:	Ընդունվել է այլ խմբագրությամբ:	Ընդունվել է այլ խմբագրությամբ:

6	Կառավարության ներկայացուցիչ	6-րդ հոդված	Հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 6. Օրենքի 156.1-րդ հոդվածի 7-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Որոշումն ընդունվում է Բարձրագույն դատական խորհրդի նիստին ներկա անդամների թվի ձայների մեծամասնությամբ, բայց ոչ պակաս քան խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն կեսով:»:	Ընդունվել է այլ խմբագրությամբ:	Ընդունվել է այլ խմբագրությամբ:
«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1	«Հայաստան» խմբակցություն	3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվող 314.4 հոդվածի 1-ին մասում՝ «դատարանի որոշմամբ» բառերից հետո լրացնել «մեկ դատական նիստի ընթացքում» բառերը:	Չի ընդունվել:	Չի ընդունվել: